



Զարարենի

Wet fur

三

卷之三

三

27

二

三

Դ. Տարի, թիւ 5, Մայիս 1, 1930

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻԿ ԶԵԳԵՈՅ ԽՕՎԱՐ ԸՆԹԵՐՑ. ԸՆԿ.-ԵԱՆ

Հրատարակելի Գրութիւններ Դրկել 923 N. Leavitt St., Chicago, Ill.

ԱՌԱՋԱՐԿԻ ՄԸ ԱՌԹԻՒ

Մեր պատուական հայրենակիցը՝ Պրի. Անդրէաս Միհանսեան, «Ծօվլառ»ի այս թիւով հրատարակուած իր գրութեան կը կցէ «յետզրութիւն» մը, որով փափաք կը յայտնէ յառաջիկայ Պատգամաւորական ժողովին մէջ մէկտեղ գտալ, զիբար հասկնալու եւ վերջ տալու համար հայրենակցական բաժնեալ գործունէութեան:

Գովելի փափաք մըն է տսիկտ և կը յայտնաբեկէ ձըշ-
մարիտ եղբայրսիրութիւն և անխարդախ հայրենասիրու-
թիւն:

Անշուշտ սեւէ ընզգիմութիւն չկրնար ըլլալ այսպիսի խաղաղասիրական առաջարկի մը։ Ամէն սիրա կը բաղձայ որ համերաշխութիւն տիրէ մեր մէջ եւ հատուածական քաշ-քընութիւնը իսպառ վերնան մէջտեսնէն։

Սակայն այս ուղղութեամբ ունէ քայլ առնելէ առաջ,
Հարկ է ճշտել կարեւոր կէտ մը, որ միծապէս պիտի ազդէ
ձևնարկի յաջողութեան:

Հաստ մեր կարծիքին, Շիքակոյի բաժանեալ հայրենակիցները Պատգամաւորական ֆողովի դաշտ առաջ, պէտք է լաւ իմանան և վերջնապէս ընդունին որ իրենք անպարհանորէն պիտի անսան տրուած որոշումներուն և յիտոյ, ամէնին կենսականը, պիտի ընդունին Կեղրոնին հեղինակութիւնը:

Ասիկա անհրաժեշտ ու կենսական հասկցողութիւն պէտք է ըլլայ, որովհետեւ առանց առողջ ոչինչ պիտի կրնայ կարգադրել ունեւ համերախական փորձ կամ ճենարկ:

Եւ ասիկա, մանաւանդ, ճամբարն պիտի գոցէ յետս ըն-
կրկումներու եւ ուրազումներու;

Եւ ինչո՞ւ ուեւէ մէկը պիտի չուղէ լնդունիլ Կեզրոնին և զինակութիւնը։ Պէտք է միանդամ ընդ միշտ փարաստի թիւր հասկացողութիւնը։ Կեզրոնին վայըը որոշ քաղաքի մը անխափճակուած չէ, ոչ ալ կեզրոնական Վարչութեան անդամները մնայուն մենաշնորհ ստացած են։ Եթէ կեզրոնը նիւ եռք է այսօր, վազը կարելի է զայն փոխադրել Լօրէնո կամ Շիքակօ, կտոր ուր որ Պատպ. Ժողովը կ'որոշէ։

Հասկնալի է թէ կատարեալ համերաշխութիւն՝ մեր հայրենակցական գործերուն մէջ՝ բաղձալի է եւ անհրաժեշտութիւն մը զարգած է: Այս համերաշխութիւնը իրա-

կանացներու հսմար հարկ է, այլու, որ երկու բաժանեալ կողմերը իրարու քոյ գան եւ խօսին երես առ երես:

Այս մերձեցումը պէտք է լլլայ կատարեալ անկեղծութեամբ եւ առանց շահախնդրական ողիի։ Մենք այս մասին կ'երաշխաւորենք մեր հակասակիրդները։ Թո՞ղ այժմ խօսին իրենք։

Առնարհաբար կը թելալը ենք Կեղր . Վարչութեան , որ
նկատի առնէ այս խնդիրը եւ եթէ նպատակայարմար կը նը-
կատէ , ձեռնարկէ հարկ եղած կարգադրութիւններուն :

ՆԻԿ ԵՈՐՔԵՆ ՅԵՏՈՅ ՇԻՔԱԿՈՆ

Նիւ Եսորքէն յետոյ ահա՛ Հբաղարակ կ'իջնէ Շիքալօն,
աւելի մեծ եւ ներկայ ժամանակներու համար անսպասելի
զոհաբերութեամբ մը: Նուիրատուններու թիւը կը ստուա-
րանայ հետագհետէ, ՖիլատէլՓիոյ մեր հայրենակիցներն եւս
իրենց բաժինը բերած են, եւ անշուշտ այն հայրենակիցները
որ կը բնակին վերոցիշեալ քաղաքներուն մէջ եւ տակաւին
չեն մասնակցած հուիրատուութեան՝ պիտի փուռթան իրենց
անունները աւելցնել ցանկին վրայ:

Շեքակոյի մեր հայրենակիցներուն ցոյց տուած զոհուզութիւնը մեզ հարիւր առ հարիւր կ'ամբապնդէ մեր համոզման մէջ թէ ձեռնարկը յաջողութեամբ պիտի պահկուի, եւ մինչեւ Պատգամաւսրական ժողով՝ ամէն տեղի հայրենակիցներ իրենց պարտականութիւնը պիտի կատարեն :

Նիւ Եղբէն, Շիքակոյէն եւ Ֆիլատէլիքիայէն յետոյ,
կարգը եկած է Լորէնսի եւ Քալիֆորնիոյ հայրենակիցնե-
րուն. անոնք եւս պէտք է աճապարեն իրենց անցեալ զոհա-
բերութեան վայել արդիւնք յառաջ բերելու: Թո՞ղ Պոսթոնի
այս ու այն կողմը ցրուած հայրենակիցներն ալ աւագ պար-
տականութիւն զգան մասնակցին նուիրատուութեան եւ
իրենց նուէքները փութմագնեն Կեղը. Վարչութեան ատենա-
պետ Պրե. Պետրոս Ստեփանէանի հասցէին՝ 68-30 Myrtle
Ave., Glendale ; L. I.

ՆՈՒԻՐ «ՅՈՎԱՆ»

Ծնորչակալութեամբ ստացած Ենք Հետեւեալ նույնըները :
 Տիկին Մարիամ Եալլակեան, Քրանսա 2.00
 Հէրի Սէրեանի տօնին սոթիւ Հաւաքուած, Սէրմա 12.00

ՊԱՏԱՍԽԱՆ ՍԱՆՈՒԿ ՍԱՀԱԿ ԱՂԲԻԱՐԻ

«Երիտասարդ Հայուսուն»ի 1930, Փետր. 22-ի թիւին
մէջ կարգացի ձեր «Զնդուշի Հայրենակցականը վարագոյրի
տակ» խորագրով յօդուածր, որ ստայօդ զբարսութիւն
մըն էր, եւ ատիկա դուռք իսկ ապացուցած էք, որովհետեւ
ձեր մօտ քաջութիւնը պակասած էր ձեր իսկ անունով երեւ-
նալու: Ես ձեր ով ըլլալը դիանալու փափաքը չունիմ, մի-
այն թէ վարագոյրի տակ տեսնուած դործ մը մերկացնել
ուղղող ինքզինք մութ նկուղներու մէջ շի պահեր, ինչպէս
դուռք ըրած էք:

Բայց սլատասխանենք ձեր գրածներուն . . . :

Կը գրէք թէ Կեղոսնը Շիքակոյէն հինգ հարիւր տոլար
ուզած է, եւ երբ անոր Հարցուած է թէ այդ գրամը Ք'նչ
բանի պիտի զործածուի, Կեղոսնը զայրացած ու պատաս-
խանած է թէ ատիկա ձեր զործը չէ եւ ձեր պարտականու-
թիւնն է միան անսալ :

Ուրբեմն թող լսեն իմ բոլոր հայրենակիցներս — մէջն
ըլլալով նաև Պրն. Սանուկ Մահակ Ազրիարը — եւ տեղե-
կանան իրադարձութեանց, որոնք տեղի ունեցած են Կեղ-
րոնին եւ Շիքահոյի մասնաճիշդին միջեւ: Այս աշխատու-
թիւնը սե ինքս կը վերցնեմ ճիշտ անոր համար որ բոլոր
թղթակցութիւնները իմ ձեռքով եւ իմ միջոցաւ եղած են:

1926-ի Պատգամաւորական Ժողովին շաբաթ մը առաջ նամակ մը ստացայ Շիքակոյի մասնաճիւղին, որով Պրի. Մ. Խաչոյեանէ և ի ինձմէ կը ինդրուէք Շիքակոյի մասնաճիւղը ներկայացնել, նոյն ատեն չուրջ ասուը հարցեր առլով մեղի: Շիքակոյի ներկայացուցած հարցերն էին զրամի կեղծոնացում, Նոր Չնկուչի վերաշնուռութիւնը Հայաստանի մէջ, եւ այլն, ասոնց հետ միասին կը խոստանար Պատգամաւորական Ժողովին զրկել հազար Հինգ հարբւր (\$1500) սովար, եւ այս գումարը բարձրացնել երեք հազարի՝ մէկ տարուան ընթացքին: Նման հարցեր եկած էին նաև քոյլ մամնաճիւղերէ, որով Պատգ. Ժողովը իր աշխատութիւնները կատարեց խիստ կանոնաւոր կերպով, իսկ Շիքակոյի ներկայացուցիչները իրենց պարտականութիւնը կատարեցին կատարել խղճմառութիւնը:

Պատգ. Ժողովը իր երկու օրուան աշխատաթիեամբ
լուծեց նաև դրամական հարցը՝ միաձայնութեամբ որոշելով
որ մասնաճիւղերու մօտ զանուած դրամին հարիւրին հնը
Կեդրոն զրկուի: Խողովք լրացաւ Կեդրոնին վայրը ընտրելով
Նիւ Եղրքը:

Սյունաւետե նորբնոիր կեղը . Վարչութիւնը մեծ հսանդ գով փարեցաւ իրեն յանձնուած գործերուն , եւ առաջին առիթով իր գանձապահը ապահովագրեց եւ զայն առաւ երաշխաւութեան տակ , ապահովելով Միութեան ամէն մէկ սէնթը : Այս պարագան առաջին շրջաբերականով՝ Պատգ . Ժողովի տեղեկադրութեան հետ միասին՝ հաղորդուեցաւ մասնաճիւղերուն : Վարչութեան երկրորդ եւ անմիջական գործը եղաւ զրացել նոր Զնոպուշը Հայաստանի մէջ վերաշնելու Հարցով : Այս առթիւ փութով նամակներ գրուեցան Հալէպ եւ Պէյրութ՝ ներփակիլով մասնաւոր Հարցարաններ , որպէս զի զանոնք լեցնելով եւ ստորագրելով մեզի վերադարձնին ամէն անոնք որոնք կը փափաքէին Հայաստան մէկնիլ : 32 Հայրենակիցներ սրատասիաննեցին մեր այս զի- մումին : Վարչութիւնը այս աշխատութեանց հետ միասին յառաջ կը տանէիր բանակցութիւնները Հ . Բ . Բ . Միութեան նիւ Եորքի Դործազիր Մարմնոյն հետ : Զմունամ ըսելու որ այս աշխատութեանց ընթացքին եւ ոչ մէկ մասնաճիւղէ զրամ ուղղուած էր . իսկ երբ մէր վերոյիշեալ ձեռնարկները արդիւնաւոր դուրս եկան , քաջակերուելով եւ կոթնելով Պատգ . Ժողովի որոշման վրայ , շրջաբերականով մը Հաղորդեցինք մասնաճիւղերու , որպէս զի փութացնեն իրենց գրա- մական իսուսումները :

Ասկէ որոշապէս կը հասկցուի թէ որքա՞ն վրան բաց սուտ մըն է Պրն. Սանուկ Սահակ Աղբիարին մէջտեկ գլուխածը, որով ցայց կուտայ իր կեղծ դիմակը եւ անդամ մըն եւս կը փորձէ մեր հայրենակցական ներդաշնակ կեանքը վրդովել: Բայց տակաւին չլերջացաւ: Այժմ տեսնենք թէ ոմքէ՞ր են իմերը եւ սեւ ոգիները մեր մէջ:

ինչպէս ըսթինք, բաւական աշխատանք կատարուած էր և մենք կը սպասէինք որ մասնաճիւղեր իրենց խոստացած դրամական առաքումները բնեն, այդ գրամով եւ Հայո-

տան մեկնողներու ցանկով ներկայանալու չ. թ. թ. Միո-
թեան Գործադիր Մարմնոյն, որովհետեւ մեր աղայոց ցան-
կը պէտք էր որ վաւերացուէր Փարիզին և զրկուէր Պէտրով
իրենց ներկայացուցիչներուն, որպէս զի Հայաստան միկնոց
ուստի նամբայ կլիէին նաեւ մեր հայրենակիցները

խոստումը կատարելու առաջնորդի շահեցաւ Լօրէնսի մասնաճիւղը՝ զրկելով հազար տուրարի չէք մը. իսկ առի շաբաթ մը վերջ Շիքակոն իմացուց որ ժողով գումարելէ յատոյ պիտի զրկէ իր բաժին գումարը. Ֆիլատէլֆիան գաղլվերաբերում մը ցոյց տուաւ իր պատասխան նամակով: Անշուշտ Լօրէնսէն դրկուած հազար տուրարը չէր որ պիտի կըսնար 32 անձինք Հայաստան փոխադրել, ուստի սպասարկիք Շիքակոյիք մասնաճիւղի պատասխանին: Ան ուշացաւ իր խոստումի կատարուամին մէջ, մենք կրկին ու կրկին գրեցինք, մինչեւ որ նոր գարցութեան ատենապետ Պ. Գէորգեանէ եւ ատենադպիր Մ. կրմոյեանէ ստորագրուած նամակ մը ստուցանք, որ ուրիշ բան չէր, բայց եթէ կրակ ու բոց ժայթքող մարտահրատէր մը, թէ ոչ մէկ ժամանակ զրած սպասարկը Շիքակոյէն, եւ թէ Շիքակոն պարտաւորուած չէ ունէ սէնթ զրկելու ուրիշ տեղ:

Մէնք այս բոլորովին անսպասելի նամակին պատասխան եցինք խիստ համոզկեր նամակով մը, խնդրելով եւ յարդորելով որ ազնիւ ըլլան նկատի ունենալ Միութեան գործ ու նպատակը: Երկար ատեն վերջ մէր Ֆիլատէլֆիա եւ Եփակօ գրած եւ անոնցմէ ստացած նամակիներէն այն եղակացութեան եկանք որ անոնք ոչ թէ չեն ուզեր օժանդակի մէզի, այլ նաեւ կը փարձեն ներքին պառակտում յառաջ բերել: Շատ չափանիկ եւ արդէն բոլոր իրողութիւնները երեւան երան: Ճիշտ այդ ատեն ստացանք նամակ մը Լօրէնունի Պրին. Սարգիս Յակոբեանէ զրուած, որով կուպար զգուշացր նել Կեդր. Վարչութիւնը, բայցով թէ Ֆիլատէլֆիայէն կարապես Արամեանէ նամակ մը ստացած է եւ թէ այս կարգի նամակիներ գրուած են նաեւ ամենուրեք Ս. Դ. Հնչակիան բոլոր Զնոպուցի բնկերներու, որ բնաւ գրամ չղրկեն Կեր բոնին եւ չլսուահին անոր, որավճենուեւ Կեդրոնը մէծամասութեամբ Վեր. Հնչակեաններէ կը բաղկանայ եղեւ եւ զը կուած գրամները պիտի զործածեն իրենց կուսակցական նրանք պատակիներուն: Այս խեղկատակ նամակիներուն, — որոնց դրուած էին Լօրէնս, Շիբակօ եւ անսպայման նաեւ Նիւ Եղոքանի որ հոս ալ Ս. Դ. Հնչակիաններ կային, — մէնք առաջին առիթով շատ կարեւորութիւն չտուինք, քանի որ եղած զրապարտութիւնը այնքան անհեթեթ էր եւ անհաւատող ուեւ ողջմիտ հայրենակցի:

Բայց չատ չանցաւ և մենք մանրամասնորին իրաղի եղանք Շիքակոյի անցուզարձերուն, թէ ինչպէս կարդ մարդիկ, հակառակ մասնաճիւղի անդամական ժողովի որշման որ գրամմ կեղբոն զրկուի, քանի երին փուլցուցած իրար կ'անցնին, որպէս զի արդիւեն ժողովին որոշման գործադրութիւնը, ոտքն առեն Պրն. Մարդար էրմոյեան սպանալից նամակի մը կը զրէ Շիքակոյի մասնաճիւղի փարչութեան, թէ կ'իմանամ որ ձեր անցեալ շարթուան ժողովը որշած է մաս մը զրամ զրկել Կեղբոն. կուզամ ըսելու որ եթէ սէնթ մը Շիքակոյին զուբս ելլը՝ ձեղ բոլորդ զատարան կը քաշեմ: (Ի վիճակի եմ ըսելու որ էրմոյեանի այս ձեռագիր նամակը ես անձամբ կարդացած եմ եւ ան կը մնայ Կեղբոնի արկղներուն մէջ): Ինչո՞ւ արդիօք այս սպառնալիքը:

Ասոր վրայ կեղր . Վարչութիւնը անմիջապէս ժողովում արքաց եւ որոշեց որ այլեւս ուեւէ մասնաճիւղի գրանցուցէ եւ զրկուածներն ալ չընդունի մինչևս Պատղամաւրահան ժողով : Ասիհա իմացուեղաւ Լորենսի մատնաճիւղին :

Կելքը. Վարչութիւնը այս քանի մը ամսուան ընթացքին չանաց գերակաղմել Ֆիլատէլիֆիոյ մասնաճիւղը և ապահովել Շիքակոյի պատգամաւորին անձամբ ներկայութիւնը Պատու. Ժողովին մէջ: Եւ իրապէս ալ երր 1927ի Պատգամաւորական ժողովը կը զումարուէր Լօրէնս, Պրն. Սարգիս Յակոբեանի ընակարասնին մէջ, առաջին ասիթով ծահօթացանք Շիքակոյի պատգամաւոր Պրն. Պալտսասար Գէորգեանի հետ: Շատ ուրախի եղայ զինքը տեսնելուս, որովհետեւ եթէ մեր թղթակցութիւնները չէին կրցած շատ բան հասկցնել, այժմ կրնայինք երես առ երես խօսիլ եւ հասկցողութեան մը յանդիլ:

Φυηηοվը սկսաւ : Հարցեիր դասաւորուեցան : Դիւանը անցաւ իր գործին : Եթի խնդիրը Հաշուեքնիչ յանձնախումբի

ընտրութեան եկաւ, ևս առաջարկեցի որ մեղամներէն մէկը ըլլայ Շիքակոյի մեր պատողամուռը, որդէս զի անձամբ՝ տեսնէ ամէն ինչ: Որպէս Կեղրոնի քարտուղար եւ հաշուա- սկան կատարեալ եւ մանրամասն հաշիւ բռնած էի, այսուհետ որ Միութեան մէկ սէնթն իսկ նշանակուած էր թէ ե՞ր ժախուած է եւ ինչո՞ւ համար: Մեր Շիքակոյի պատու- մաւորը ձեռքս սեղմեց եւ խոստովանեցաւ թէ մեր հայրե- նակցական կեանքին մէջ առաջին անգամ էր որ կը հանդի- պէր այսքան պարզ եւ հասկնալի հաշիւի մը: Կեղրոնի ամ- րող տարուան ծախսը եղած էր 170 տողար, մէջն ըլլալով կեդր. Վարչութեան անդամներուն նիւ. Եորքէն կօրէն ճա- նապարհածախսը:

Այս բոլորին հետ կարդացուեցան նաև Շիքակոյի մաս- նամիւլին հետ վոխանակուած նամակները, որոնցմէ յայտ- նի եղաւ որ Շիքակոյի մասնաճիւղին բռնած լնթացքը դա- տապարտելի էր եւ այսպէս ալ արձանադրուեցաւ ժողովի տեղեկագրութեան մէջ, ի վերջոյ աւելցնելով սոյն հա- տուածը թէ՝ «Եթէ Շիքակոյի մասնաճիւղը հետ այսու իր պարուականութիւններն ու յանձնառութիւնները լրիւ կատա- րէ, իր մասին տրուած զատապարտութեան որոշումը չեղ- եալ պիտի համարուի»:

Փողովը մէծամասնութեամբ կրկին նիւ. Եորքը կեղրոնի վայր ընտրեց, եւ երբ կեդր. Վարչութեան ընտրութեամբ ե- կաւ կարգը, ևս եւ իմ ընկերներս կամնաւ մէրժեցինք ունէ պաշոն ստանձնել նորընտիր վարչութեան մէջ՝ իրեւ բո- ղոք եւ զայրոյթ Շիքակոյի մասնաճիւղին ցոյց տուած տը- մարդի եւ անարդարանալի վերաբերումին հանդէպ:

Այսպէս կը վերջանար ժողովը եւ Պրն. Գ. Դէորդեան կը մէկնէր Շիքակօ լեցուն խոստումներով: Բայց շատ չան- ցած սկսաւ նոյն խազը: Պրն. Գէորգեան գործողութեամբ տա- կաւին նոր եղած հանգիստի եւ օգափոխութեան պէտքն ու- նի եղեր եւ ատիկա ուղած է ընկել Միութեան հաշուոյն:

Ամէնէն յետոյ այս պարոնները փորձեցին մասնաճիւ- ղին դրամը հանել եւ հասարակ առաւ փախաներու պէս ան- յախացնել անոր հետքը: Կեդր. Վարչութիւնը իր մասնա- ճիւղերու ստիպումին տակ՝ այց դրամին վրայ արգելք դը- րաւ, որդէս Միութեան դրամը, եւ արդէն յայտնի է թէ ասկ յառաջ եկան գատ եւ բոլոր յետագայ խայտառակու- թինները:

Իրեւ պարզ Զնդուցի մը ի սրոտէ կը ցաւիմ որ Միու- թեան գործերը այսպէս յոսոյ ընթացք մը ունեցած են եւ ու- նին տակաւին: Կիրքեր արձարծելու համար չէր որ դրեցի վերջիշեալ իրողութիւնները, այլ իրեւ լուսարանութիւն, որդէս զի Շիքակոյի մեր կարդ մը հայրենակիցները քիչ մը հանհուութիւն ունենան զոնէ իրենց գործած աւելը ուրիշ- ներու կանակը չհանելու եւ իրական գարձնելու «Եթէ զողը ուժով ըլլայ տանուէրը գող կը բռնէ» ժողովրդական ծանօթ ասցուածքը:

Ա. ՄինԱՍԵԱՆ
Ա. ՄինԱՍԵԱՆ

Յ. Գ.— Երէ իրապէս կը ցաւիմ բոլորս ալ եւ կ'ու- ղեմ դարման մը տանիի ստեղծուած կացութեան, արդիօք կարելի չէ՞ որ Յուլիսին գումարուելիք Պատգամաւրական ծովովին իրուրս զանք իրարու մօտ, զիրար հասկնանք, առ- նենք այն ինչ որ օգտակար է. իսկ մէկ կողմ նետենք ինչ որ վնասակար է, եւ միանգամ ընդ միշտ վերջ տանք այս ցաւու հարցին: չէ՞ որ բոլորս ալ նոյն գաղափարին ու նապատակին համար կը գործենի ու կը զոհենի: Այս պարագան թէ կ'սեղ- րանի եւ թէ մասնանիւթերու. ինչպէս նաև Շիքակոյի մեր բաժանեալ հայրենակիցներու ուշադրութեան կը յանձնեն:

ՆՈՅՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մեր խորին չնորհակալութիւնները կը յայտնենք Ռ. Ա. Կուսակցութեան ֆրանսայի Շրջ. եւ Վալանսի Ակումբին Վարչութեանց, Զնդուցի վերը. Միութեան Մարսէյլի մաս- նաճիւղին եւ բոլոր բարեկամներու, ազգականներու եւ ըն- կերներու, որոնք անձամք, նամակով եւ ծաղկեսպասակով ի- րենց ցաւակցութիւնը յայտնեցին մեր ողբացեալ հօր, եղ- րօր, հօրեղբօր եւ աներչօր Պրն. Կարապետ Թուրոյիանի դասնադէտ մահուած ստթի:

Սպակիրք

ԶԱԻԿՈՒՆՔ ԵՒ ԲՈՂՈՐ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Վալանս, 3 Մարտ 1930

ՏԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Շիքակոյի մասնաճիւղին սարքած հանդէսին մէջ հան- գանակութեան մասնակցած են հետեւեալները —	
Տէր եւ Տիկ. Գ. Պուշուրամետն	\$100.00
Տէր եւ Տիկ. Խ. Եղոյեան	75.00
Տէր եւ Տիկ. Խ. Պուհան	60.00
Տէր եւ Տիկ. Ե. Աշտարակենց	50.00
Մ. Յանկալուրեան	50.00
Տէր եւ Տիկ. Դ. Բունեան	50.00
Տէր եւ Տիկ. Յ. Առարարեան	50.00
Տէր եւ Տիկ. Վ. Յայլական	50.00
Տէր եւ Տիկ. Դ. Յույնամնեան	50.00
Տէր եւ Տիկ. Վ. Յալուկինց	50.00
Առարտիկ Խաչ	5.00
Տէր եւ Տիկ. Պ. Աղնաւորեան	5.00
Տէր եւ Տիկ. Կ. Գույյումնեան	10.00
Տէր եւ Տիկ. Մ. Տօքուզլեան	5.00
Տէր եւ Տիկ. Կ. Մինարէնեան	5.00
Տէր եւ Տիկ. Լ. Եւոն Վարդանեան	10.00
Տէր եւ Տիկ. Գ. Թէլլօհան	5.00
Վարդան Միքայէլեան (Մերաստացի)	5.00
Մ. Յակուրեան	5.00
Ն. Յակուրեան (Ճանսրն, Խարբերդցի)	15.00
Մայր եւ որդի Ճորժ Գաղեան (Էնկիւրցիցի)	15.00
Տէր եւ Տիկին Տ. Թորոսեան (Խարբերդցի)	5.00
Տէր եւ Տիկ. Ս. Առաքել Աղնաւորեան	5.00
Ղաղար Դըրբղեան (Խալօն)	5.00
Կ. Ս. Թէլլօհան	5.00
Ոմն	2.00
Ոմն	2.00
Հօլին մէջ ծախուած վարդերէն	6.70
Ոմն	2.00
Տէր եւ Տիկ. Յ. Ապրդէթեան	10.00
Տէր եւ Տիկ. Խ. Պումբդանեան, Ուէսթ Նիւ. Եորք	\$5.00
Ումեխ Թուխմանեան, Ֆիլատէլֆիտ	10.00
Միմոն Պատեան, Ֆիլատէլֆիտ	15.00
Կ. Թ. Թուխմանեան, Ֆիլատէլֆիտ	15.00
Կ. Թ. Թուխմանեան, Ֆիլատէլֆիտ	25.00
Գումար՝	883.70
Նախորդ պումար՝	315.00
Բնոշանուր պումար՝	\$1148.70

ԶՆԳՇՈՅ ՎԵՐՉ ՄԻՈՒԹԵԱՆ ՇԻՔԱԿՈՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ՀԱԿՑԱԽԱՆԱՂԸ

Աղրիւ 13, Կիրակի, Մաղկազարդի օրը, պարտաճանաչ Զնդուցցիններու կոկիկ բազմութիւն մը լեցուցած էր Շիքա- կոյի Հայ Առաքելական եկեղեցոյ սրահն, վայելելու մաս- նաճիւղիս սարքած հաւկթախաղը:

Օրուան տուենագետ Պրն. Խ. Պուհան մի քանի խօսքե- րով հանդէս բացուած յայտաբարեց, եւ խնդրեց ներկանե- րէն որ մէկ վայրեան յոտնկայս յարգեն մէր նահատակնե- րուն լիշտապեր, որոնք 13 տարի առաջ խժդութօրէն սպան- նուած էին թշնամիւթիւն:

Յարգանքի այս ցայցէն յետոյ երգելու հրաւիրուեցաւ Տիկ. Լ. Մ. Տօքուզլեան, որ շատ յուղիչ կերպով երգեց «Եկեղիչն վարդ»ը եւ ներկաներու ծափին արժանացաւ: Ա- տենապետին հրաւիրով ուղիղ մը արտասանեց Տիկին Ասա- նէթ Յ. Եօքուզլեան, որով բացարեց կարմիր հաւկիթին նշանակութիւնը եւ մաղթեց որ այսպիսի հաւկթախաղեր սարքելու առիթի ունենանք նաեւ նոր Զնդուցի մէջ:

Տիկին Տօքուզլեան կրկին հրաւիրուեցաւ երգելու, եւ այս անգամ երգեց «Միրուհիս քեղ համար»ը՝ գոհ թողելով ներկաները եւ անսնցմէ խլելով երկարատեւ ծափահարու- թիւն: Տիկին Տօքուզլեան կրթուած ծայն ունի եւ քաղաքին Հայ Աւետ եկեղեցոյ երգչախութիւն առաջնորդն է:

Այս հանդէսին մէջ յատկապէս խօսելու հրաւիրուած էր ղաղութիս ծանօթ աղգայիններէն Տոքթ. Լ. Մուղալեան:

Յարգելի Տոքթորը բեմ և լվելով նախ իւ ուրախութիւնը յայտնեց որ արդ օր Զնդուցիներու հետ էր, որովհետեւ, ըստ, 15 տարիէ աւելի է որ կը ճանչնամ Զնդուցիները ու անոնց ժիր, գործունեայ և պեճըսուն աչքերը: Մեր անցեալէն վերջիշումներ ընելով՝ թուեց նաեւ մեր պարզունակ բայց հայրենասիրական բարձր ու զոհաբերութեան պատրաստ ողին՝ ազգային բոլոր շարժումներու առթիւ: Յիշելով մեր Վերաշինացին նպատակի և մեր Միութեան ու Բարեգործականի հետ ունեցած համաձայնութիւնը, ամէնէն խելացի քայլը նկատեց եւ բացատրեց Զնդուցիներուս ստունալիք առաւելութիւնը՝ նոր Զնդուչ թաղամասը «Նուպարաշչն»ի մէջ շներու մեր ծրագրով: Տոքթ. Մուլայեանի կէս ժամ տեսող համոզիչ ու փաստացի բացատրութենէն յետոյ, ատենապետ Պրն. Խ. Պոռեան 60 տոլարով բացաւ հանգանակութիւնը ի նպաստ նոր Զնդուչ թաղամասին: Ատենապետին հետեւեցան 50 տուողները, յետոյ յայտնուեցաւ Պր. Խ. Եղոյեանի 77 տոլարը, եւ անկէ ետք Պրն. Գ. Պուշտրամեանի 100 տոլարը, նուիրատուաթեան գումարը յայտարարելու համար:

Ներկաները բոլորն ալ մասնակցեցան Հանգանակութեան 15-ով, 10-ով, 5-ով և 2-ով։ նուիրատուններու ցանկը եւ ամբողջ գումարը կ'երեւի «Ծօվասո»ի այս թիւին մէջ։ Այս յաջող ու խանդախռող Հանգանակութենէն յետոյ, պատեհնութիւն տրուեցաւ ներկաներուն որ վահեին օրուան կարմիր հաւկեթը, չօրէկը, առատ պառը եւ կանաչեղենը։ Հոս կարգին է յիշել որ յանձնախումբը առատ եւ լաւ պատրաստութիւն տեսած էր։

ինչպէս ամէն տարի, այս տարի ալ Մայր Գաղեան աշխատեցաւ Միութեան համար՝ պատրաստելով չօրէկը, եւ 15 տոլարով ալ մասնակցեցաւ հանգանակութեան։ Միութեան կողմէ չնորհակալութիւն կը յայտնուի Տոքթ. I. Մուղալեանի որ իր սրտապնդիչ առենախօսութիւնէն յետոյ օդնեց նաեւ Խ. Պոռեանի եւ Մ. Յանկալուրեանի՝ հանգանակութիւնը յաջողցնելու համար։ Շնորհակալութիւն կը յայտնուի նաեւ Պըն.Գ. Յովսէիեանի որ իր ինքնաշարժով փախալրեց հանդէսին բոլոր պիտոյ յգները։ Շնորհակալութիւն Տիկնայք իօժէնի Պ. Եայլահանի եւ Սրբուհի Յ. Խոհարարեանի, որոնք օդնեցին բոլոր պատրաստութիւններուն։ Շնորհակալութիւն նաեւ Օրիորդներ ինա Կ. Գույումձեանի եւ Սաթենիկ Խ. Խորայէլեանի՝ իրենց օժանդակութեան համար։ Շնորհակալութիւն Տիկին Լ. Տօքուլեանի եւ Տիկ. Ա. Յ. Կօրսուլեանի եւ բոլոր ներկաներուն։

Ա. ԱՇՏՎԱՐԱԿԵՆՑ

ԶՆԳՈՒՇՑԻՆԵՐՈՒՄ ԿԵԱՆՔԵՆ

Նիւ ԵԱՐՔ. — Խոր ցաւով կուպանք յայտնելու որ մաս-
նածիւղիս ժրաշան ու զսհարերող անդամներէն Պրն. Սար-
դիս Մաթոսեանի մայրը, զաղութիս լուրո Զնդուցիներէն
յարգուած ու սիրուած Տիրօ Մաման քանի մը չաբաժներէ
ի վեր անկողնոյ կը ծառայէ : Այս առթիւ իր ողջիկը մինչեւ
Տիրոյթէն եկած է հոս իր մօր սնարին վերեւ պահապան
Հրեշտակի մը պէս հոկելու և խնամելու զայն : Տիրուհի
մայրիկը ըլլալով մեր գաղութիւ Զնդուցի տիկիններուն ա-
մէնէն տարէցը, ի յարդանս եւ ի միսիթարութիւն՝ բոլոր
Զնդուցիներ շատ յաճախ կ'այցելեն իրեն : Մենք ի սրոէ
կը ցաւինք եւ շուտափոյթ ապաքինում կը մաղթենք մեր սի-
րեի մարդիկին :

ՀՐԱՄԱՆ

ՊէՅՐՈՒԹ. — Տէլ և Տիկ. Ճան Թուխմանեան քաղաքէս
մէկնեցան դէպի Նիւ Եռոք: Բարի ճանապարհ կը մաղթինք:
*** Տէլ և Տիկ, Պ. Գոտնապատեան ոժքախսութիւնը ու-

*** Տէր եւ Տիկ. Պ. Գողոսնպսեան դժբախտութիւնը ու-
նեցան Փետր. 18ին կորսնցնելու իրենց ութը տարեկան աղ-
ջիկը: Մէր խորին ցաւակցութիւնը կը յայտնինք ուղակիր
ծնողագ եւ բոլոր ապդական բարեկամներուն:

*** Պրն. Խ. Կուլօսանի կուռքին վրայ աշխատելու պարագային արկածի մը հանդիսելով վար ինկած եւ թեր վհասած է : Շուտափոյթ ապաքինում կը մաղթենք :

Ս. ԿԱԿՈԵԱՆ

ՄԱՐՄԱՔԻ. — Հայրենակցուհի Տիկին Թագուհի Թուխմանեան Պէյրութիչն քաղաքս ժամանեց և օր մը մնացէ իւտոյ մեկնեցաւ Հարաւ. Ամերիկա իր տղարոց ծօտ: Տիկին Թագուհի իր հետ ունիչը աղջիկը, թոռնիկը և զաւկին նշանածը: Բարի ճանապարհ կը մաղթենք:

*** Մեր պատուական հայրենակից Տէլ եւ Տիկ. Ա. Գող-
մազեանի աղջկան նշանափօսութեան ներկայ էր Զնդուցի
եւ ոչ-Զնդուցիներու ստուար բազմութիւն մը: Նշանափ-
սութիւն անցաւ շատ փառաւոր, ներկաններ ունեցան լաւ ժա-
մանց եւ մեկնեցան զոհ տպաւորութեամբ՝ բարեմաղթու-
թիւններ բներով Դոգմագեան բնտանիքին:

*** Օր. Ազնիւ Պօղոսանի նշանախօսութիւնը եւս տեղի ունեցաւ հայրենակիցներու եւ բարեկամներու բազմութեան մը ներկայութեան: Այս երկու նշանախօսութեան մէջ այ Զնոպութի պարը մէծապէս զուրաբճացոց ներկաները:

*** Մէր Ատիշցի Հայրենակիցը Տիգրան Պազմասարքան
իր մահկանացուն կնքեց 24 տարեկան ծաղիկ Հասակին մէջ
Թաղման տիսուը արարողութիւնը տեղի ունեցաւ Փետր
20ին, ձևամբ Տէր Եղիչ քահանային: Թաղումէն յետու
քահանան խօսեցաւ քանի մը խրատականներ ուղղուած երի-
տասարդներու, որ միշտ ըլլան իրենց ապրելակերպին նշ-
կատմամբ: Երկնային մսիթարութիւն կը հայցնեք Համսուց-
ևալի բրոջ եւ վեսին, որոնք Ամերիկա կը գտնուին:

Պ. ՏԱՐԴՈՒՆԵԱ

ՍԵԼՄԱ. — Զատոկի Սր. Յարութեան օրը, ինչպէս ամբարի, այս տարի ալ հայրենակիցներու բազմութիւն մը հաւաքուած էր Տէր եւ Տիկին Հէրբ Սէրեանի ընակարանը մասնակցելու համար մեր հայրենակցին անուան տօնակատարութեան: Խ. Ս. Սըրըմեան իր մեծ նզորը տօնին առթի նույիրած էր լման զատ մը: Տիկ. Վարդեր Սէրեան լաւ պարաստութիւն տեսած էր ճոխ սեղան մը պատրաստելով՝ որ չուրջ բոլորու եցան ներկաներ եւ բարի մաղթանքներ ընելու ճաշեցին: Ֆրէտի եւ Մատղաչեան նուազախումբը նուազի Հէրիին թոռը, անդրանիկ որդին Տէր եւ Տիկ. Մասիս Սէրեանի, սկսաւ պարել: Այս տոթիւ Զագո Սըրըմեան Ծօվ յիշելով անոր ի նողաստ 12 սուլար հանդանակեց: Բոլոր նա կաներ գոհ մնացին փոքրիկ Անդրանիկի պարէն, եւ զիւ աւ ատեն ուրախ սրտով մեկնենցան:

*** Տէր եւ Տիկ. Մարթին Սըրբմէան մանչ զաւակի ունեցան Ապրիլ 10ին: Մարթին զաւակն է Տէր եւ Տիկ. Աղան Սըրբմէանի: Աչքը լույս բոլոր Սըրբմէաններու:

Կ. Ս. ՍԼՐԸՆՑԻ

*** Տէր եւ Տիկ. Յ. Աղողկիթեանի փոքրիկը Մարտիրոս
որ հիւանդանոց փոխադրուած էր, տուն բերուած է: Մի
խնդակցութիւնը կը յայտնենք եւ կտորեալ ասլաքիով
կը մաղթենք:

*** Օր. ինա Կ. Գույրւմձեան յաջողութեամբ աւարտեց
փըպլիք սփուլը եւ այժմ կը յաճախիք քաղաքիս Թուլի հո
սփուլը: Մեր խնդակցութիւնը յայտնելով կը մաղթենք ո՛
ազնիւ օրիորդը իր հայ սփուլի ընթացքն ալ յաջողութեամ
աւարտել:

ԼՕՐԻՆՆ. — Ապրիլ 13ին սեւ հոդին յանձնեցինք մեր տարկան հայրենակիցը Պրն. Խ. Գույումնեան: Հանգիստ իր անձինքն եւ մխիթարութիւն իր ազգականներուն:

*** Պրն. Պ. Գույշումեան քաղաքիս հիւանդանոցը վու խալքուեցաւ զործովութեան և նախարկուելու համար : Եւ

տափոյթ առաջնութիւն կը մաղթենք:
 *** Տէր եւ Տէկին Ա. Ոսկերիչնանի փոքրիկ Թուխմանց
 պառկած է զրծագիկ հւանդութեամբ, ապաքինում կը մար
 թենք:

*** Պրին. Աւետիս կելքմանեան, որ մի քանի ամիս առաջ այս տան մեկնած եւ անկէ ալ կրկին Նիւ Եղրք վերաբարձած էր, իր եղբօրորդւոյն ընտանիքին հետ քաղաքս կեալու իր հայրենակիցներուն այցելութիւն մը տալու համար իւրի զարուստ կը մաղթենք:

፩፻፲፭